Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
նոյեմբերի 30 -ի N 711- Ա
որոշման

«Պատերազմի պայթուցիկ մնացորդների և ականների վտանգի իրազեկման ծրագիր Հայաստանի Հանրապետությունում»

Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Ծրագիրը նպատակ ունի նվազեցնել պայթուցիկ մնացորդների և ականների վտանգը և ազդեցությունը՝ դրանց ռիսկերի վերաբերյալ ուսուցման և իրազեկվածության բարձրացման հանրային քարոզարշավների ու անմիջական հաղորդակցությունների իրականացման միջոցով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով:
3.	Բարեգործը	ՆԱՏՕ-ի ապահովման և մատակարարման կազմակերպություն՝ Ականազերծման և ուտիլիզացիայի հիմնադրամի միջոցով Հեռ.՝ +35230637597, Էլ. Հասցե՝ anne.seguin@nspa.nato.int Հեռ՝ +374 77716718, Էլ. Հասցե՝ margarita@chde.am
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզեր: Բնագավառը՝ առողջապահություն, կրթություն, աղետների ռիսկի նվազեցում
6.	Ծրագրի բյուջեն	179 352 000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ 4 մարզերի 42 ազդակիր համայնքների բնակչություն, 109 կրթական հաստատությունների 250 ուսուցիչներ և 25000 աշակերտներ: Առնվազն 120,000 տղամարդիկ, կանայք, տղաներ և աղջիկներ կդառնան ծրագրի շահառուներ՝ սովորելով պայթուցիկ վտանգներից արդյունավետ պաշտպանվելու գիտելիքներ և յուրացնելով պայթուցիկ վտանգների առկայության մասին հաղորդելու հմտություններ:

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01.06.2020 – 31.05.2022 Ծրագրի մեկնարկից մինչև ծրագրի բարեգործական որակումն ընկած ժամանակատավածում իրականացված գործարքների մասով հարկային արտոնություններ չեն ակնկալվում:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում ծավալվող գործողությունները լինելու են հետևյալ ուղղություններով՝ 1. Համայնքահեն միջոցառումների իրականացում, որը ներառում է բոլոր ազդակիր համայնքներում ծրագրի ներկայացման հանդիպումների կազմակերպում, շահառու մարզերի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և շահագրգիռ կողմերի հետ համակարգման հանդիպումների կազմակերպում, կարիքի գնահատման և ծրագրի աղզեցության վերաբերյալ հետազոտությունների իրականացում, հետևանքների մեղմացման միջոցառումների իրականացում, ներառյալ անվտանգ խաղահրապարակների կառուցում, վտանգավոր տարածքների պաշտպանիչ պատերի կառուցում կամ վերանորոգում և այլ: Իրականացման ժամանակահատված՝ 01.06.2020- 31.05.2022 թթ.: Բյուջե՝ 59,208,600 դրամ 2. Դպրոցական միջոցառումների իրականցում, որը ներառում է ազդակիր համայնքների կրթական հաստատությունների համար նախատեսված կրթական նյութերի և փաթեթների մշակում, իրազեկվածության բարձրացման նյութերի մշակում և տպագրում, վերապատրաստումների և դասընթացների իրականցում, դպրոցներում թեմատիկ մրցույթների կազմակերպում և իրականացում: Իրականացման ժամանակահատված՝ 01.06.2020 - 31.10.2021թթ. Բյուջե՝ 82,949,700 դրամ 3. Ծրագրի տեսանելիության ապահովում, որը ներառում է ծրագրի իրականացման և արձանագրվող արդյունքների վերաբերյալ հանրային իրազեկման նյութերի մշակում և հանրայնացում, տեղեկատվական նյութերի տարածում: Իրականացման ժամանակահատված՝ 01.06.2020 - 31.05.2022թթ. Բյուջե՝ 5,021,000 դրամ 4. Ծրագրի կազմակերպչական և պահպանման ծախսեր, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, ՀԿԽԸ աշխատակիցների գիշերակացի

		ապահովման համար հյուրանոցային և սննդի ծառայությունների ձեռքբերում, տրասպորտային ծախսեր և մոնիտորինգի, գնահատման և հաշվետվությունների մշակման ծառայությունների ձեռքբերում: Իրականացման ժամանակահատված՝ 01.06.2020 - 31.05.2022 թթ. Բյուջե՝ 32,172,700 դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիր՝ 1. Բնակչության շրջանում ականների և պայթուցիկ մնացորդների վերաբերյալ դասընթացների և միջոցառումների համար հյուրանոցային ծառայությունների ձեռքբերում՝ 24,909,450 դրամ արժողությամբ: 2. Դասընթացների մասնակիցների համար սննդի ձեռքբերում՝ 6,150,000 դրամ արժողությամբ: 3. Դասընթացների մասնակիցների տեղափոխման ծառայությունների ձեռքբերում՝ 9,472,835 դրամ արժողությամբ: 4. Դասընթացների և դպրոցներում միջոցառումների համար գրենական պիտույքների և այլ նյութերի ձեռքբերում՝ 19,239,000 դրամ 5. Իրազեկող ու կրթական նյութերի և վահանակների դիզայնի և տպագրական ծառայությունների ձեռքբերում՝ 28,659,200 դրամ արժողությամբ: 6. Կրթական և մեթոդական նյութերի մշակման ծառայությունների ձեռքբերում՝ 7,194,000 դրամ արժողությամբ: 7. Մոնիտորինգի, գնահատման և հաշվետվությունների մշակման ծառայությունների ձեռքբերում՝ 6,505,000 դրամ արժողությամբ: 8. Մարզերում դժվարհասանելի համայնքներում համայնքահեն միջոցառումների իրականացման համար 4x4 մեքենայի ձեռքբերում՝ 10,750,000 դրամ արժողությամբ: 9. Մեքենաների համար վառելիքի ձեռքբերում՝ 5,978,400 դրամ արժողությամբ 10. Մեքենաների պահպանման ծառայությունների ձեռքբերում՝ ՝ 1,399,200 դրամ արժողությամբ: 11. Հետևանքների մեղմացման միջոցառումների իրականացման համար շինարարական նյութերի և այլ օժանդակ նյութերի ձեռքբերում՝ 34,717,600 դրամ արժողությամբ: 12. Շինարարական նյութերի դեպի դժվարհասանելի համայնքներ բեռնափոխադրման ծառայությունների ձեռքբերում՝ 3,180,000 դրամ արժողությամբ: Ծրագրի մեկնարկից մինչև ծրագրի բարեգործական որակումն ընկած ժամանակատավածում իրականացված գործարքների մասով հարկային արտոնություններ չեն ակնկալվում:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի կազմակերպական և պահպանման ծախսեր՝ 32,172,700 դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ՝ 14,839,697 դրամ արժողությամբ, ՀԿԽԸ աշխատակիցների գիշերակացի ապահովման համար հյուրանոցային և սննդի ծառայությունների ձեռքբերում՝ 3,450,403 դրամ արժողությամբ, բենզինի ձեռքբերում ՀԿԽԸ մեքենաների համար՝ 5,978,400 դրամ արժողությամբ, մեքենաների սպասարկման ծառայությունների ձեռքբերում՝ 1,399,200 դրամ արժողությամբ և մոնիտորինգի, գնահատման և հաշվետվությունների մշակման ծառայությունների ձեռքբերում՝ 6,505,000 դրամ արժողությամբ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի շրջանակներում հաստատվելու է սերտ համագործակցություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների, մարզպետարանների, թիրախային համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, ՀՀ ականազերծման գործողությունների ազգային մարմնի՝ Հումանիտար ականազերծման և փորձագիտա-կան կենտրոն ՊՈԱԿ-ի, Ականազերծման և ուտիլիզացիայի հիմնադրամի, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսված է ամսական հաշվետվությունների տրամադրում, և պարբերաբար մոնիթորինգային այցերի կազմակերպում: Հայկական Կարմիր խաչի ընկերության Գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է գործունեության անմիջական վերահսկում: Նաև ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16 N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ